



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«25» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 294 - 24

Նախաձեռնող՝

«ԴԵՄԵՐ» ՍՊԸ

Արամուս Ազատամարտիկների խճղ. Կր. 6

Գործունեությունը՝

Արամուսի բազալտի հանքավայրի «Պարիսպ»
տեղամասի փակման ծրագիր

Կորայրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 294 - 24

«25» դեկտեմբեր 2024թ.

Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Պարիսպ» տեղամասի փակման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԴԵՄԵՐ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակը՝

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Արուսյան համայնք, Արամուս բնակավայր

Ներածական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի «Պարիսպ» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Արուսյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում՝ Արուսյան համայնքից 4.5 կմ, Արամուս բնակավայրից 1.2 կմ հեռավորության վրա:

Փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Թիվ ՇԱԹՎ-29/059 ընդերքօգտագործման թույլտվությամբ տրամադրված ընդերքի տեղամասի ծայրակետային կոորդինատներն են՝

X	Y
1. 4455962,0	8471562,2
2. 4456102,0	8471671,3
3. 4456040,0	8471757,4
4. 4455899,0	8471671,5
5. 4455870,0	8471601,0
6. 4455893,0	8471572,0
7. 4455897,0	8471553,0
8. 4455909,0	8471580,0



Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր տարածքը կազմելու է շուրջ 2.5 հա:

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Պարիսպ» տեղամասում հանքի փակման աշխատանքների շրջանակում նախատեսվում է.

- հեռացնել տեխնիկա-տրանսպորտային միջոցները և արտադրական սարքավորումները (ՋՏ կայան): Ապամոնտաժել ժամանակավոր կառույցները, տարածքը մաքրել շինարարական աղբից և չօգտագործված նյութերից,
- իրականացնել ռեկուլտիվացիայի աշխատանքներ,
- իրականացնել հիմնական ճանապարհների բարեկարգում,
- նախատեսված ժամանակաշրջանում իրականել մշտադիտարկման աշխատանքներ:

Հանքի փակման աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները:

Հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը կազմում է՝

Հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ, ծախսերի հոդվածները	Չափման միավորը,	Գումարը
Հողերի ռեկուլտիվացիա	հազ. դրամ	1844.5
Հիմնական ճանապարհների բարեկարգում	հազ. դրամ	300.0
Բացահանքի տարածքի մոնիտորինգ	հազ. դրամ	300.0
Նախագգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում	հազ. դրամ	200.0
Աշխատողների վերաորակավորման նպատակով ֆինանսական ներդրումներ	հազ. դրամ	1600.0
Ամբողջը	հազ. դրամ	4244.5

Նախատեսվող աշխատանքների կատարման ժամկետներն են՝

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ 10 օր,
- արտադրական հրապարակի ապամոնտաժում, սարքավորումների տեղափոխում՝ 3 օր,
- բացահանքը սպասարկող ավտոճանապարհի, հարակից խախտված հողատարածքների վերականգնում՝ 10 օր,
- նախագգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում՝ 3 օր:



Հանքի փակման աշխատանքների տարածքում, ըստ ներկայացված հաշվետվության, չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում:

Փակման աշխատանքների տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45 դԲԱ):

Գործունեության իրականացման ընթացքում, հանքի փակման փուլում առաջանալու են օդային ավազանի արտանետումներ, սակայն օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում:

Բացահանքի փակման աշխատանքների ընթացքում սպասվում է, որ կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդոդերն ու կենցաղային աղբը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքները պահեստավորվելու են արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվելու է համապատասխան թեքություն,
 - կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,
 - իրականացվելու է լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
 - իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա,
 - նախատեսվում են կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
 - աշխատանքների ընթացքում իրականացվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան,
 - տրանսպորտային միջոցներն ու սարքավորումներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
 - բացառվելու է անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
 - բացառվելու է տարածքում թափոնների այրումը,
 - թափոնները պահվելու են նախատեսված տարածքում՝ հետագայում լիցենզավորված վերամշակող ընկերություններին վաճառելու համար,
- Փակման աշխատանքների ընթացքում «Դեմեր» ՍՊԸ իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ եռամսյակը մեկ անգամ,

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ.

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- բացահանքի և հարակից տարածքներում կենսաբազմազանության դիտարկումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխությունների գնահատման համար: Մշտադիտարկումների պարբերականությունը լինելու է տարին մեկ անգամ:

Մշտադիտարկումներն իրականացվելու են 5 տարի տևողությամբ՝ մինչև շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է 300.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային քննարկման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Հանքի փակման աշխատանքների ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշման պահանջների համաձայն:

- Հանքի փակման գործողություններում ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

ԵՃՐԱՓԱՎԻՉ ՄԱՍ



«Դեմեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Պարիսպ» տեղամասի փակման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան